

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ	2
1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	2
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ -----	3
2. Զարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ	4
3. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ	5
3.1 Ծրագրեր և կատարողականություն -----	5
3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	7
3.3 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում -----	7
3.4 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն -----	7
3.5 Զարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	8

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Չարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 ապրիլի 2010թ, ՀՕ-46-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 21(755), 19.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ ուժը կորցրած են ճանաչվում նույն օրենքի 20-րդ հոդվածի վերջին պարբերությունը՝ ՀՀ-ում արտադրվող ԱՏԳ ԱԱ 2009, 2201, 2202, 2203 ծածկագրերին դասվող ապրանքների արտադրության ծավալների հաշվառման վերաբերյալ, և 28.6-րդ հոդվածը՝ ՀՀ-ում

ԱՏԳ ԱԱ 2009, 2201, 2202, 2203 ծածկագրերին դասվող ապրանքատեսակների արտադրության համար սահմանված ծախսաչափային հանգույցները չկիրառելու և վերջիններիս շահագործման կանոնները խախտելու համար կիրառվող պատասխանատվության վերաբերյալ:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1342-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	22 ապրիլի 2010թ, N 429-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 18(752), 05.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիների կողմից ծառայության ավարտից հետո **առանց մաքսատուրքի վճարման** ներմուծվող գույքի բնաիրային չափերը սահմանելու կարգը:



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 29-ի N 124 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	01 ապրիլի 2010թ, N 412-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 18(752), 05.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ցանկից, որոնց ներմուծման և արտահանման համար թույլտվություն է տրվում ՀՀ կառավարության կողմից, հանվում են միջուկային նյութերի (ներառյալ ջերմարտադրիչների տեսքով նյութերը) տեխնոլոգիաները, սարքավորումները, տեղակայանքները, հատուկ ոչ միջուկային նյութերը և դրանց հետ կապված ծառայությունները, իոնացնող ճառագայթման արդյունքները, ինչպես նաև թմրադեղերը:



1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունվարի 19-ի N 7-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	29 մարտի 2010թ, N 450-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական կորմատիվ ակտերի տեղեկագիր N 11(363), 03.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010թ. ապրիլի 26-ի ՀՕ-46-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ վերոնշյալ հրամանով ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունվարի 19-ի «Հեղուկների արտադրության ծավալների

հաշվառման ծախսաչափային հանգույցների կապարակնքման ընթացակարգը, հաշվառման արդյունքների վերլուծության հանձնաժողովների ձևավորման կարգը, հաշվառման սարքավորումների տեխնիկական սպասարկման արդյունքների գրանցամատյանի և ծախսաչափային հանգույցների կապարակնքման հայտի ձևերը հաստատելու մասին» N 7-Ն հրամանը:

2. ՀԱՐԱԿԻՑ (ՏՆՏԵՍԱԿԱՆ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 ապրիլի 2010թ., ՀՕ-44-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 18 (752), 05.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրատարակմանը հաջորդող 10-րդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքի 20-րդ հոդվածի 42-րդ կետում կատարված փոփոխությամբ երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական թույլտվություն տալու համար պետական տուրքի դրույքաչափ է սահմանվում բազային տուրքի 20-ապատիկի չափով, իսկ նույն հոդվածում՝ 43-րդ կետի լրացմամբ երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման ընդհանուր թույլտվություն տալու համար պետական տուրքի դրույքաչափ է սահմանվում բազային տուրքի 30-ապատիկի չափով:



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 ապրիլի 2010թ., ՀՕ-45-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 18 (752), 05.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող 10-րդ օրը

Համառոտ նկարագիր

Կատարված փոփոխությամբ թեմատիկ ստուգում է սահմանվում «երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության հետ կապված գործունեությանը

ներկայացվող պահանջներին համապատասխանության» ստուգումը՝ նախկին «երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հետ կապված փաստաթղթերի հավաստիության» ստուգման փոխարեն:

Փաստաթուղթ	«2009 թվականի նոյեմբերի 3-ին Զուլվեյթում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Զուլվեյթի պետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը
Ամսաթիվը և համարը	20 ապրիլի 2010թ, ՍԴՈ-878
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 18 (752), 05.05.2010թ.
Ուժի մեջ է	Հրապարակման պահից

Համառոտ նկարագիր

Սահմանադրական դատարանի որոշմամբ վերոնշյալ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

3.1 | Ծրագրեր և կատարողականություն

3.1.1 | Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/

1. | ՀՀ ԿԱ ՊԵԿ գործունեության թափանցիկության ապահովում /ՀՀ ԿԱ ՊԵԿ 2009թ. տարեկան հաշվետվության հրապարակում/

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով առաջին անգամ մշակվել է «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2009թ. տարեկան հաշվետվություն»-ը: Հաշվետվությունում ամփոփվել են 2009թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հիմնական ձեռքբերումները, առաջընթացը ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից որդեգրած հիմնական նպատակների իրագործման ուղղությամբ: Հաշվետվությունում առկա է տեղեկատվություն ՀՀ ԿԱ ՊԵԿ եկամուտների հավաքագրման, ռազմավարական ծրագրերի և գերակա խնդիրների, հսկողության, ինչպես նաև հարկ վճարողների սպասարկման և ՏՏ ոլորտում 2009թ. իրականացված հիմնական աշխատանքների վերաբերյալ: Հաշվետվությունը տեղադրվել է ՀՀ ԿԱ



ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում, նախատեսվում է այն տպագրել 130

օրինակ և տեղաբաշխել շահագրգիռ մարմիններին՝ միաժամանակ ապահովելով հաշվետվության անգլերեն լեզվով տպագրումը և բաշխումը (50 օրինակ):

2. | Մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.05.10թ. թիվ 825-Ն հրամանով հաստատվել է հարկային մարմնի ներկայացուցիչների կողմից հարկային հսկողության ընթացքում կազմվող տեղեկանքների և հաշվետվության ձևերը, դրանց կազմման և ներկայացման կարգը: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի և ՀՀ կառավարության 18.02.10թ. «Հարկային մարմնի ներկայացուցիչների նշանակման և ներկայացուցիչների աշխատանքների կազմակերպման հարցերը կանոնակարգելու մասին» թիվ 1487-Ն որոշմանը համապատասխան՝ սույն կարգը կանոնակարգում է հարկ վճարողի մոտ հարկային հսկողություն իրականացնող հարկային մարմնի ներկայացուցիչների կողմից հսկողության ընթացքում տեղեկանքների և հսկողության արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմման ու ներկայացման կարգը:



րողի մոտ հարկային հսկողություն իրականացնող հարկային մարմնի ներկայացուցիչների կողմից հսկողության ընթացքում տեղեկանքների և հսկողության արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմման ու ներկայացման կարգը:

3.1.2 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

ՀՀ կառավարության «ՀՀ գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» 2010 թվականի հունվարի 21-ի թիվ 97-Ն որոշման 2.2 կետով նախատեսված միջոցառման իրականացմանն աջակցելու նպատակով՝ սույն թվականի մայիսի 17-21-ը Հայաստանում է գտնվել Միջազգային ֆինանսական կորպորացիայի փորձագետը, որն արտաքին առևտրի ընթացա-

կարգերի խոչընդոտները բացահայտելու համար հանդիպումներ է ունեցել ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնատար անձանց, մաքսային բրոքերների, տնտեսավարող սուբյեկտների, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության, ինչպես նաև մի շարք այլ գերատեսչությունների համապատասխան ներկայացուցիչների հետ: Այց է կատարվել նաև Բագրատաշենի մաքսային կետ, որտեղ փորձագետին ներկայացվել են մաքսակետում կիրառվող մաքսային ընթացակարգերը: Հանդիպումների արդյունքների վերաբերյալ փորձագետի կողմից կներկայացվի հաշվետվություն:



2010թ. մայիսի 25-ին մասնակցություն է ապահովվել Եվրոպական հանձնաժողովի ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում ք. Անթալիայում՝ Թուրքական Հանրապետություն, կազմակերպված «ՏՐԱՍԵԿԱ երթուղիների մրցունակություն և աջակցություն առևտրին» խորագրով աշխատաժողովի աշխատանքներին:

3.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

3.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /մաքսային ծառայության մասով/

20.04.2010թ-ից մինչև 20.05.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից անցկացվել

է թվով 4 ծառայողական քննություն, որի արդյունքում թվով 3 մաքսային ծառայողներ ստացել են նկատողություն, 1 մաքսային ծառայող՝ խիստ նկատողություն:

3.3 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

3.3.1 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի 09.04.2010թ. որոշմամբ 2010թ. մայիսի 11-ին անցկացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունների, էռզոր հարկ վճարողների հարկային տեսչության և Օպերատիվ-հետախուզության վարչության ատեստավորման ենթակա, սակայն ժամանակավոր անաշխատունակության պատճառով ատեստավորումից բացակայած հարկային ծառայողների ատեստացիա: Ատեստավորված հարկային ծառայողներից 2-ը մրցութային և ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նրանցից 1-ն ազատվել է աշխատանքից, իսկ 1-ը՝ իջեցվել զբաղեցրած պաշտոնից:



3.4 | Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն

3.4.1 | Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/

2010թ-ի մայիս ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ Հարկային ծառայության «Թեժ գծով» ստացվել է շուրջ 1800 զանգ, որից 301 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզաբանների տրամադրման նոր կարգին, պայմաններին, ժամկետներին, մայիսի վիճակահանության շահող թվերին և շահումների տրամադրման կարգին, ինչպես նաև վիճակահանությանն առնչվող բազմաթիվ այլ հարցերի: Առաջարկությունները հիմնականում վերաբե-

րել են պարզաբանների տրամադրման նոր կարգին և պայմաններին: Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

3.5 | Զարկային և մաքսային թվերի համառոտագիր

3.5.1 | Զարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2010 թվական		
		Ապրիլ	Հունվար-ապրիլ	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-ապրիլ) %
2	3	4	5	
1	Հաշվառված՝ ԶՎՀՅ ստացած հարկ վճարողներ	1281	5392	86.2
2	Զարկային մարմնի կողմից պետությունը հավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	40.947	139.444	119.2
2.1	ԱԱՀ	6.608	29.485	135.0
2.2	Շահութահարկ	13.106	31.583	105.9
2.3	Ակցիզային հարկ	271	1.864	111.3
2.4	Եկամտահարկ	6.303	22.525	138.4
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9.588	35.772	119.0
2.6	Այլ	5.070	18.215	105.4
3	Զարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2.817	8104	93.8
4	Զարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն դրամ)	2.577	5.484	61.7

3.5.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-ապրիլ	Ապրիլ	Հունվար-ապրիլ	Ապրիլ	Հունվար-ապրիլ	ապրիլ
2	3	4	5	6	7	8	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	63 683	16 243	78 781	24 309	123.7	149.7
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	374 691	110 551	555 748	157 190	148.3	142.2
2.1	Արտահանում (մլն դրամ)	65 914	22 665	116 569	37 747	176.9	166.5
2.2	Ներմուծում (մլն դրամ)	308 777	87 886	439 179	119 443	142.2	135.9
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	9 813	3 113	9 543	3 706	97.2	119